

քով՝ դրելու է . . . Եղբայր, ընկերդ մասնիչ կուշկույ՝ ինքզինքդ Վարդանի տեղ մի՛ ցնեիր։ Եւ փոխանակ՝ Մշեցին կամ միւսը, եղբայրն եղբօր գէմ՝ զրդուկու, սորուեցուր այդ խեղճին թէ (եթէ գիտես և կրնաս) ինչպէս կրնայ իւր հայրենեաց մէջ իւր պարէնը ճարել, և վերջապէս քարոզէ ժողովուրդին իրեն օգուտ տուող այնպիսի սկզբը բռնէքներ, որ գէտ զի նա համաձայնի և կարենայ լսել թէ՝ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»։ ապա թէ ոչ աւելի լաւ կրնէ ժողովուրդը փոխանակ քեզ իրր խրատողին՝ միտիկ ընելու՝ «Բժիշկի, բժշկեա՛ զանձն քո» ըսէ։ Յոնս, օրիելի եղբայր։

Պ. Գեղեկեան

Մանգուսի Եֆեմը, Թի. 2323, 2324. Սեպտ. 27.

Պօլսոյ արուարձաններէն ի Հիսար գտնուած Ռուպերթեան բողոքականաց վարժարանի մէջ՝ ազատամիտ զաղափարներով հրատարակած յայտադրին ընդդէմ՝ ի գործ դրուած կրօնամոլական բռնութեանց համար տեղի տուած անցից վերայ լրագրաց ոմանց մէջ կարգացուած ախուր նկարագիրները աստ քաղել և հրատարակել կարեւոր կտեսնեմք։

ՌՈՊԵՐԹԵԱՆ ՎԱՐՇԱՎԱՆ.

Ամեն հայ լրագիրք Ռուպերթեան վարժարանին այս վերջին օրերս բռնած կրօնամոլ ընթացիցը վրայ գրեցին. ուստի մեզի ալ հարկ է իրր հայ լրագիր մը քանի մը խօսք ուղղել զպրոցին տնօրէնին։

Ասկէց տասն և հինգ տարիի չափ առաջ երբ բողոքականութիւնը Պօլսո մօտէ, այն աստն միտեօնալները սկսան աժան գիրք ծախելով զմեզ որսալ։ ամանկ ոչինչ գիներով որ՝ 30 դուրուշի արժողութեամբ գիրք մը մինչև 30 վարալի ծախել սկսան, բայց տեսան որ այնքան սարսափելի գումարներ վատնելով հանդերձ չկրցան իրենց նպա-

տակին հասնիլ, սկսան ուրիշ միջոցներ մտածել, և ճշմարիտը խօսելով գտան այնպիսի միջոց մը՝ որ քար մը նետելով երկու ընկուզ պիտի ձգէին, որով թէ մեր մատաղ զաւակունքը ուսման պատրուակաւ պիտի խարէին, և թէ այսքան տարուան ցրուած ստակնին մէկիկ մէկիկ պիտի ժողվէին, այս անգամ՝ հրացանը սրտերուն ուղղեցին, բայց իրենց զժաղդութենէն գնտակը սահեցաւ և պարտեալ ետ դարձան։

Մեր հասարակութիւնը այնպիսի բնաւորութիւն մը ունի՝ որ ամեն երեսը խնդրոցողը իրեն բարեկամ կը կարծէ, և երբ խարուած ըլլալն իմանայ, այն ատեն կը փրփուի, կը բարկանայ, կը կռուի և վերջապէս կը յաղթէ, բայց եկու տես որ այս խարուիլն ալ անմիջապէս կը մոռնայ, և ուրիշ շատ անգամներ ալ նորէն կը խարուի, ինչպէս որ այսքան տարուան փորձերէն յայտնի է։

«Փորձեալը կրկին փորձիլը յիմարութիւն է», առակը ամենեւին մեր ազգին համար է, և մեր այս անտարբերութեամբն է որ հայ ազգը երկու երեքի բաժնուած է, գուցէ ասանկ երկայնէ՛ քանի մը բաժանումներ ալ աւելնայ։

Մեր հայ լրագիրներն ալ որչափ որ ներքնապէս մեկզմէկ զգալ մը ջուրի մէջ խեղդել կը նային, դուրսէն յարձակում մը ըլլալուն պէս ամենը կը միանան և կոխին դէմ դնել, շատ անգամ՝ ալ կը յաջողին յաղթանակը փաստելու. և ահա այս անգամ ալ հայ լրագրաց պոռչոտութեն Ռուպերթեան վարժարանը զաւակնին տուող հայրերը թմրութենէ սթափելով՝ հասկցան խարուած ըլլալն և իմացածնուս նախելով երեսուն հատէն աւելին իրենց զաւակը վարժարանէն հանելը են, միանգամայն տուած ստակնին ալ պահանջելով։ Յուսամք թէ մնացածներն ալ ասոնց կը հետեւին։

Բայց բողոքականաց խորամանկութիւնը շատ է, հարկաւ ուրիշ միջոց մ՝ ալ կը գտնեն դարձեալ ազգին մէջ մտնելու, և մեր հայ ժողովուրդը թող հիմակուրէն պատրաստ ըլլայ խաբուելու և վերջէն կրակ կայ պօռալու։

Քանի որ այս միամիտ բնաւորութիւնը մեր վրայ է, ատեն ատեն օտարին թէ ուղղակի և

Թէ անուղղակի մեր վրայ յարձակելէն ազատե-
լիք չունինք:

Մատուլ №. 322 Սեպտ. 29.

**Այս առթիւ Օրագրոյ մէջ ևս հե-
տեւաները կարգացինք:**

ՌՕՊԷՐԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Սոյն վարժարանին մէջ վերջին օրերս տեղի ու-
նեցած մէկ ցաւալի դէպքը կամ լաւ ևս՝ բըռ-
նութիւնը անշուշտ շատեր կարդացին Ազգ. լրա-
գրաց մէջ. բռնութիւն մը ո՛չ թէ զարոցական,
այլ ազգութեան՝ կրօնքի վերաբերող բռնութիւն
մը:

Պ. Համլի՝ որ իւր անունը մեր ազգին գիտնա-
կան մասին քով յարգելի ըրած էր, ցաւալի է
որ իւր վարժարանին մէջ գործուած միջնադա-
րեան բռնութիւններով իւր վրայ եղած համա-
բուժն այլ ևս ջնջած է: — Բայց է՛հ, Պ. Համլին
մի՞թէ Հայ մ՛ է, մի՞թէ բողոքական Միսիօնարաց
շուքին տակ ապրող վարժարանի մը մէջ ուրիշ
նպատակ կարելի՞ է յուսալ, մի՞թէ ճիզութիւն
Ֆուէրներն ու միսիօնարք 30—40 տարիներէ ի
վեր մեր ազգին կործանմանը չե՞ն աշխատիր,
մի՞թէ Պապութեան ու Բողոքականութեան այս
հռչակաւոր ուխտեալները՝ Հայ ընտանեաց յար-
կերուն ներքեւ սողոսկելով՝ այսօրուան վախճան
հազար կաթողիկոսները և տասն և հինգ հազար
բողոքականները չի բաժանեցի՞ն մեր ազգային
միութենէն:

Այո՛, դեռ մէկ քանի տարի առաջ Գատը գիւ-
ղի ֆուէրներն ալ ըսին իրենց վարժարանի Հայ
աշակերտաց՝ « թողուցէք ձեր հերետիկոս ե-
կեղեցին՝ և ուղղամիտ Պապին փարախը դար-
ձէք »:

Ո՞վ կրնար կասկածիլ, որ օր մ՛ ալ Ռօպեր-
դեան վարժարանի բողոքական տնօրէններն ու
միսիօնար քարոզիչները չը պիտի ըսէին Հայ ա-
շակերտաց « ուրացէք ձեր կրօնքը՝ և բողոքա-
կան եղէք, ուրացէք ձեր եկեղեցին՝ և մեր ժո-
ղովարանը եկէք, ուրացէք ձեր ազգը՝ և օր մ՛

ալ ձեր ազգէն մաս մըն ալ դուք բերէք միսիօ-
նարաց սեւ քղանցքին տակ քնացուցէք, » ու
րովհետեւ ընտանի ձեռքեր աւելի դիւրաւ կրնան
ազգ մը կործանել:

ՌԻՐԱՅՈՒՄ.

Ուրացում կը քարոզեն Ռօպերթեան վարժա-
րանին մէջ, ինչպէս որ ասկէ առաջ քարոզելին
և ինչպէս որ յաւիտեան պիտի քարոզեն ամեն
տեղ ուր որ Հայ մը իրենց ճիւղաններուն մէջ պի-
տի իյնայ:

Է՛հ, Հայ ազգը որս մ՛ է կ'ըսեն, և ճիզվիժք
ու Միսիօնարք դժոխային ցանցի մը պէս նորա
շուրջը պատած զո՛հ կը մրմռան . . .

Բայց այլ ևս Հայը ճանչցած է իւր ազգութեան
թշնամիները, որ դուք էք ճիզվիժք ու Միսիօ-
նարք. ալ Հայը ամօթ և վատութիւն պիտի հա-
մարի « պապական եմ », կամ « բողոքական եմ »,
ըսելը:

Հայեր, այս կէտը խիստ լաւ գիտեն միսիօնար-
ներն ու ֆրէրները, և սկսած են վարժարաննե-
րու միջոցաւ որսալ զմեզ:

Զի խաբուի՞ք որ այդ իրենց վարժարաններուն
մէջ Հայ մանկտին ընդունելով՝ անոնց լոյս և ու-
սում պիտի տան:

Ասոնք վարժարան չեն, Պապականութեան
կամ Բողոքականութեան ձուլարաններ են:

Զեր որդիքն իբրեւ ճշմարիտ Հայու զաւակ՝
Հայ կը մօտեն հոն, այլ իբրեւ Պապութեան կամ
Բողոքականութեան զինուորներ դուրս պիտի ել-
նեն, մեր ազգային աւերները բարդելու նոր վեր-
քերով, զի ընտա՛նի ձեռքեր աւելի դիւրաւ կըր-
նան ազգութիւն մը քանդել:

Եթէ դուք իբրեւ Հայ՝ վատութիւն և ամօթ
կը համարիք ձեր նախնեաց արիամիւր սրբագոր-
ծեալ ազգութիւննիդ ու կրօնքնիդ ուրանալ,
զիտե՞ք՝ որ բիւր անգամ վատ ու նուաստ եղած
կ'ըլլաք՝ եթէ ձեր որդիքը ձեր անտարբերու-
թեամբ բողոքական կամ պապական ըլլան:

Արդարեւ, որքան զայրոյթ կը պատճառէ Ռօ-
պերթեան վարժարանի այս կոշտ ու բարբարո-
սական բռնութիւնը, նոյնքան ուրախալի է որ

նոյն վարժարանի սաներէն Պ. Պ. Գափամաճեան, Յակոբոֆ և զեռ մի քանի եռանդուն Հայ պատանիներ բողոքեր են այս բռնութեան դէմ և իրենց ծնողաց հաւանութեամբը մտադիր են եղեր վարժարանը թողուլ:

Տեսնենք, Ռօպէրթեան վարժարանի հայ աշակերտաց ծնողքը Հայկայի, Գրիգորի և Վարդանայ Աստուածը պաշտած ժամանակին՝ որտե՞ր թողուն որ իրենց որդիքն ալ Պապին կամ Միսիօնարին Աստուածը պաշտեն:

Կ. ՔԵՐԵՍԷՆՆԵՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՆԻ
ՌՕՊԵՐԹԵԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ.

Ազնիւ աշակերտներ

Լսեցի թէ մօտերս բողոքեր էք առ վարժարանի Տնօրէնն, այս կարգադրութեան դէմ, որով կը տրամադրէր զաշակերտս ուսնել անպատճառ բողոքական կրօնը: Արդո՞ւմ ձեր այդ ազգասիրական վարմունքը, նկատելով որ ատոնք կը յանդգնին ազատամտութեան դիմակին տակ ամեն տեսակ պժգալիք գործել: Ա՛յլ ցաւէի ես արդէն ձեր վրայ Ռօպէրթեան վարժարանի մէջ ուսանելունդ համար, կը ցաւէի զի փոխանակ ազատամիտ յարկերու՝ կ'երթաք կուսանիք մոլեռանդներու յարկի մը տակ, որուն հիմնադրուելուն նպատակը միայն Բողոքականութիւնը տարածել է:

Ասով չեմ ուզեր ըսել թէ ազգային յարկերու տակ և ե՞մ զատարակուեցէք, զի անհարին է օտար լեզուներ և բարձր գիտութիւններ կատարելապէս սովորել հօդ, այլ կ'ըսեմ թէ հարկ է փախիլ այն տեղերէն՝ ուր կրօնամոլութեան պրժգալի ակտը կը տիրէ, և երթալ հօն ուր ազատամտութիւնը ժողովրդեան մեծագոյն մասէն ընդունուած ըլլալով կրօնական երկպառակութեան, քինանդութեան ու մոլեռանդութեան միակ դարմանն նկատուած է: Հոն ազատ և համարձակ ձեր խիղճն ու հաւատքը պաշտելով ջանացէք որ ըլլաք կատարեալ լուսամիտ անձեր, և երբ որ մը ձեռն ի ձախատ դրած աշխարհիս մարդոց բաւուցը վրայ մտածէք, ձեր սրտին խորէն հառաչ

արձակեցէք այն մոլեռանդներուն դէմ, որոնք ընդ միշտ եղբայր եղբօր դէմ կը պատակօեն:

Բ. Ա. ԱՐԹԻՆՕՖ

28 ԵՊՐ. 1875

Ի-ՅԷ-ԴԵ:

Օրադիր Թ. 1052 Սեպտ. 29.

ՆՈՒԷՐ.

Բարձր. Միտհաթ բաշա հինգշաբթի օր մեր Ազգային Հիւանդանոցը այցելութեան երթալով, ամեն յարկերն ալ շրջելով մի ըստ միօրէ աչքէ անցնելէն յետոյ, 5 Օսմ. ոսկի նուէր մը շնորհելով մեկներ է:

Օրադիր Թ. 1054 Հոկտեմ. 14.

ՅԱԳՈՒԼԵԱՅ.

Ինքնագիր-Բեան Արարատ Ամառայն.

Ներկայ ամսոյ 25-ին ըստ սովորութեան կատարուեցաւ տեղւոյս երկսեռ ուսումնարանաց 6-երորդ տարեգարծի հանդէսը խիստ շքեղ արարողութեամբ, զի նոյն օրը (որ Ս. Քրիստափոր եկեղեցւոյ տօնախմբութիւնը կատարուեցաւ) զինի արձակման Ս. Պատարագին քահանայք և զպիք խաչով և խաչվառով Շարական երգելով զիմեցին զէպ յՕրիորդաց ուսումնարան, որանց ետևից զնում էին և բազմամբօխ ժողովուրդ, արք և կանայք, նոյն օրուայ մատաղից մասնակից լինելէն յետոյ, նոյն հանդիսով մտան ուսումնարան, ուր կարգաւ շտրուած էին երկսեռ աշակերտներ յաջ և յահակ իրանց ուսուցիչներով և ուսուցչուհիներով. նոքա ևս երգեցին յարմարաւոր Շարական, և Անդաստան օրհնուեցաւ, և յետոյ ըսկսեցին հետզհետէ կարգալ խորհրդաւոր ծառեր, և լրանալիս՝ երգում էին երկսեռ մանուկներ սրբաշարժ երգեր. 1, ծառն կարգաց Հախնազարեանց Պ. Սարգիսն (որ հօգարարութեան անգամ է), 2, Տ. Աւետիքեանց Պ. Նիկողայոսն